



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

16 մարտի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/2

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ԲԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ԲԴ ՆԻՍԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 50 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, արտաքին կապերի, առևտրի և սպասարկումների, առողջապահության, գնումների, զարգացման և ներդրումային ծրագրերի, եկամուտների հաշվառման և գանձման, իրավաբանական, կազմակերպական, ֆինանսական վարչությունների պետերը, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արա Բաղդամյանը, «Երևանի Կենտրոնի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նորայր Քալանթարյանը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց, որ ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Արփենիկ Մարությանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին: Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի մարտի 10-ի հ.28 արձանագրության՝ Երևանի ավագանու Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ Արփենիկ Մարությանի մանդատը տրվել է Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Արման Բաբաջանյանին:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղակացրեց, որ Երևանի ավագանու 16.03.2021թ. նիստի օրակարգի նախագծի 10-րդ հարցը՝ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» (սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի հաստիքացուցակի վերաբերյալ) հարցը հանում է քննարկումից:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» հ.1-Ն որոշման հավելվածի 114-րդ կետի 5-րդ ենթակետը՝ Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը առաջարկեց Երևանի ավագանու 16.03.2021թ. նիստի օրակարգի նախագծի 24-րդ հարցը՝ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» ավագանու որոշման նախագիծը քննարկել որպես օրակարգի նախագծի 15-րդ հարց:

Առաջարկն ընդունվեց:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու **2021** թվականի մարտի **16**-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու **6**-րդ նստաշրջանի **2**-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի զարգացման **2020** թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին:
3. Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23**-ի **հ.310**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **22**-ի **N307**-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
6. Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
7. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի մրցույթների կազմակերպման և անցկացման հանձնաժողով ստեղծելու մասին:
8. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **հ.10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
9. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
10. «Երևանի Կենտրոնի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:
11. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:
12. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:
13. «Քոլեքթիվ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
14. «ԿԱԶԱՌՄ ՕԻԼ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
15. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
16. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:
17. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
18. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
19. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
20. Երևան համայնքի սեփականության **2020** թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
21. «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:
22. Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի փետրվարի **12**-ի **N59**-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
23. Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ ընդունելու մասին:
24. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Երևանի ավագանու **6**-րդ նստաշրջանի **2**-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **42** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **39**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

2. ԼՍԵՑԻՆ - Երևանի զարգացման **2020** թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետի պաշտոնակատար Արամ Հովսեփյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **3** անդամ.

1. Սերգեյ Գյոզայան-Երևանի ավագանու անդամ
2. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Իզաբելլա Աբգարյան- Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետի պաշտոնակատար Ա. Հովսեփյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևանի զարգացման **2020** թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու **3** անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
2. Արմեն Ներսիսյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
3. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Երևանի զարգացման **2020** թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևանի զարգացման **2020** թվականի ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

- ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **48** անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **37**, դեմ՝ **5**, ձեռնպահ՝ **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Սերգեյ Գյոզայան-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Ա. Ներսեսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու **6** անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

3. Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

4. Լուսինե Գևորգյան-Երևանի ավագանու ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Սերգեյ Գյոզայան-Երևանի ավագանու անդամ

6. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

«Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ **Հ. Մարությանը**:

Եզրափակիչ ելույթով հանդես եկան Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը և գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Հաստատել Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն NN1-5 հատվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **47** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **37**, դեմ՝ **5**, ձեռնպահ՝ **2**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը **14.00**-ին:

4. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի ղեկտեմբերի **23**-ի **հ.310**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Արմեն Ներսիսյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ **Հ. Մարությանը**, քաղաքապետի տեղակալներ՝ **Ս. Ներսեսյանը** և **Ս. Հարությունյանը**:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի ղեկտեմբերի **23**-ի **հ.310**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23**-ի «Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեն հաստատելու մասին» **N310**-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Երևան քաղաքի **2021** թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացնել **9,700.0** հազար դրամ՝ «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) հաշվեկշռում հաշվառված անշարժ գույքի ձեռք բերման նպատակով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների ձեռք բերում» հոդվածով:

2. Որոշմամբ հաստատված Երևան քաղաքի **2021** թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացնել **313.4** հազար դրամ՝ Ընկերության հաշվեկշռում հաշվառված շարժական գույքի ձեռք բերման նպատակով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով:

3. Որոշման **NN 3, 6** և **7** հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն **NN1-3** հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **39** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **37**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. ԼՄԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **22**-ի **N307**-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **22**-ի **N307**-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **22**-ի «**2021** թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» **N307**-Ն որոշման **1**-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ **9**-րդ ենթակետով.

«**9) 2020** թվականի սեպտեմբերի **27**-ին սկիզբ առած պատերազմի հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած Արցախի Հանրապետության տարածքներից Երևան տեղափոխված և Երևանի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվող երեխաների համար **2021** թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ գրոյական դրույքաչափի կիրառմամբ:»:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է **2021** թվականի հունվարի **1**-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **39** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **38**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

6. ԼՄԵՑԻՆ - Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Մարկոս Հարությունյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

3. Հոփսիսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Ներսեսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ

1. Գայանե Վարդանյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Լուսինե Գևորգյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել **2020** թվականի սեպտեմբերի **27**-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած պատերազմական գործողությունների արդյունքում Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում մնացած, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի դարձած և Երևան համայնքում գրանցված փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություն՝ ազատելով գույքահարկի առկա պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից մինչև նշված փոխադրամիջոցների խոտանման ամիսը ներառյալ և դրանց մասով փոխադրամիջոցների գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

2. Արցախյան պատերազմների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու ժամանակ **1**-ին և **2**-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին տրամադրել սեփականության իրավունքով պատկանող մեկ փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝ ազատելով մինչև **2021** թվականի դեկտեմբերի **31**-ը ներառյալ գույքահարկի առկա պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից և դրանց մասով փոխադրամիջոցների գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **38** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **37**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

7. ԼՍԵՑԻՆ - Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի մրցույթների կազմակերպման և անցկացման հանձնաժողով ստեղծելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչ Գայանե Եղիազարյանը տեղեկացրեց, որ «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի մրցույթների կազմակերպման և անցկացման հանձնաժողով ստեղծելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ

1. Սարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծել մրցույթները կազմակերպող և անցկացնող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **34** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **34**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

8. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **հ.10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **հ.10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու **2** անդամ

1. Սարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

2. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցություն անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի հունիսի **16**-ի **N16**-Ա

որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման N 2 հավելվածում`

ա. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Գնումների վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Գնումների վարչություն	
1	վարչության պետ	1
2	վարչության պետի տեղակալ	1
3	գործավար	1
-	Ապրանքների գնումների բաժին	
4	բաժնի պետ	1
5	գլխավոր մասնագետ	4
6	առաջատար մասնագետ	3
-	Աշխատանքների և ծառայությունների գնումների բաժին	
7	բաժնի պետ	1
8	գլխավոր մասնագետ	4
9	առաջատար մասնագետ	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	18

բ. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Եկամուտների հաշվառման և գանձման վարչություն» գլխի 3-րդ և 7-րդ տողերի 3-րդ սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «14» թիվը փոխարինել «16» թվով:

գ. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ֆինանսական վարչություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 կետով.

1.1	վարչության պետի տեղակալ	2
------------	-------------------------	----------

6-րդ, 12-րդ և 18-րդ տողերի 3-րդ սյունակի «3», «4», «4» թվերը համապատասխանաբար փոխարինել «2», «5», «3» թվերով, ուժը կորցրած ճանաչել 15-րդ տողը և գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «Բյուջետայի ծախսերի արդյունավետության գնահատման բաժին» տողով և 21, 22 ու 23 կետերով.

-	Բյուջետայի ծախսերի արդյունավետության գնահատման բաժին	
21	բաժնի պետ	1
22	գլխավոր մասնագետ	2
22	առաջատար մասնագետ	2

ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «**31**» թիվը փոխարինել համապատասխանաբար «**36**» թվով:

2. Սույն որոշմամբ նախատեսվող հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշմամբ նախատեսված ամսական պաշտոնային դրույքաչափերին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **38** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` **34**, դեմ` **2**, ձեռնպահ` **2**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

9. ԼՄԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի հունիսի **16**-ի **N16**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» **N10**-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման N 1 հավելվածում`

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 1-ին գլխի 3-րդ կետի «Առևտրի և սպասարկումների վարչություն» բաժնի փոխարինել «Առևտրի և ծառայությունների վարչություն» բաժնի,

բ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 1-ին գլխի լրացնել նոր 25-րդ կետով` «25) Ձորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն»,

գ. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 3-րդ գլխի 3-րդ` «Ձորահավաքային բաժին» կետը,

դ. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ (բացառությամբ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների) գլխի 1-ին բաժիններ մասի «1) Առևտրի, սպասարկումների և գովազդի բաժին» բաժնի փոխարինել «Առևտրի, ծառայությունների և գովազդի բաժին» բաժնի, իսկ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ գլխի 1-ին բաժիններ մասի «1) Առևտրի, սպասարկումների բաժին» բաժնի փոխարինել «Առևտրի և ծառայությունների բաժին» բաժնի:

2) Որոշման N 2 հավելվածում`

ա. «Ղեկավարություն» գլխի 3-րդ, 9-րդ և 12-րդ տողերի 3-րդ սյունակի «3», «4» և «3» թվերը փոխարինել համապատասխանաբար «4», «5» և «4» թվերով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «29» թիվը փոխարինել «32» թվով,

բ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Անշարժ գույքի կառավարման վարչություն» գլխի 3-րդ և 18-րդ տողերի 3-րդ սյունակի «1» և «4» թվերը համապատասխանաբար փոխարինել «2» և «5» թվերով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «29» թիվը փոխարինել «31» թվով,

գ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Առողջապահության վարչություն» գլխի 5-րդ տողի 3-րդ սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «10» թիվը փոխարինել «11» թվով,

դ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնում «Առևտրի և սպասարկումների վարչություն» բաժնի փոխարինել «Առևտրի և ծառայությունների վարչություն» բաժնի, իսկ 3-րդ տողի 3-րդ սյունակի «3» թիվը փոխարինել «4» թվով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «17» թիվը փոխարինել «18» թվով,

ե. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ձորահավաքային բաժին» գլխի,

զ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «առաջին և զորակոչային հարցերի կազմակերպման բաժին» տողից առաջ ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր «Ձորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն» գլխի հետևյալ բովանդակությամբ.

1.1	Ձորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն	
1	վարչության պետ	1
2	վարչության պետի տեղակալ	1
3	գործավար	1

	Պլանավորման, գորակոչային հարցերի և գորահավաքային բաժին	
4	բաժնի պետ	1
5	գլխավոր մասնագետ	2
6	առաջատար մասնագետ	2
	Քաղաքացիական պաշտպանության բաժին	
7	բաժնի պետ	1
8	գլխավոր մասնագետ	1
9	առաջատար մասնագետ	1
10	առաջին կարգի մասնագետ	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	12

է. «Է. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Գործերի կառավարման և սպասարկման վարչություն» գլխի **20**-րդ տողի **3**-րդ սյունակի «**7**» թիվը փոխարինել «**8**» թվով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «**106**» թիվը փոխարինել «**107**» թվով,

ը. «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցներ» բաժնի **2.1 - 2.5** և **2.7- 2.12** տողերի բոլոր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերում «Առևտրի, սպասարկումների և գովազդի բաժին» բառերը փոխարինել «Առևտրի, ծառայությունների և գովազդի բաժին» բառերով, իսկ **2.6** տողի «Առևտրի և սպասարկումների բաժին» բառերը փոխարինել «Առևտրի և ծառայությունների բաժին» բառերով:

2. Սույն որոշմամբ նախատեսվող հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշմամբ նախատեսված ամսական պաշտոնային դրույքաչափերին համապատասխան:

3. Սույն որոշումը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասով ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **35** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **33**, դեմ՝ **2**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

10. ԼՄԵՑԻՆ - «Երևանի Կենտրոնի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

1. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևանի Կենտրոնի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

1. Տիգրան Գալստյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոն Մելքոնյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևանի Կենտրոնի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել «Շախմատի Երևանի բարձրագույն վարպետության մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «Երևանի Կենտրոնի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **40** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **37**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **2**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

11. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Դավիթ Համբարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Սերգեյ Գյոզայան-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Դ. Համբարյանը:

«Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու **3** անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

3. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի հունիսի **16**-ի **N16**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» **N10**-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1. Որոշման **N2** հավելվածում «I Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն» գլխի **4**-րդ տողի «առաջատար մասնագետ» բառերը փոխարինել «լրագրող» բառով, իսկ **7**-րդ տողը ուժը կորցրած ճանաչել:

2. Որոշման **N2** հավելվածում «I Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Արտաքին կապերի վարչություն» գլխի **2**-րդ տողը ուժը կորցրած ճանաչել:

3. Սույն որոշմամբ նախատեսվող հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանվում է Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշմամբ նախատեսված ամսական պաշտոնային դրույքաչափերին համապատասխան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **40** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` **33**, դեմ` **4**, ձեռնպահ` **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

12. ԼՍԵՑԻՆ - Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վարաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ **Հ. Մարությանը:**

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ **2021** թվականի ընթացքում հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում **2021** թվականի տեղական վճարների դրույքաչափերը հաստատելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **33** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **28**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **4**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

13. ԼՍԵՑԻՆ - «Քոլեքթիվ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Քոլեքթիվ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել «Քոլեքթիվ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **33** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **30**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

14. ԼՍԵՑԻՆ - «ԿԱԶԱՌՄ ՕԻԼ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «ԿԱԶԱՌՄ ՕԻԼ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել «ԿԱԶԱՌՄ ՕԻԼ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **35** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **32**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

15. ԼՍԵՑԻՆ - Հոդամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Սերգեյ Գյոզայան-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի խորհրդական Դավիթ Ճգնավորյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչ Գայանե Եղիազարյանը տեղեկացրեց, որ «Հոդամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Սերգեյ Գյոզայան-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լիլիթ Կիրակոսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ՝ «Ռենշին» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն վարչական շրջանի, Տերյան փողոցի **h.107** հասցեում, տարածագնահատման **3-րդ** գոտում գտնվող **10214.08**քմ մակերեսով հողամասից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման **11.12.2020**թ. **h.11122020-01-0176** վկայական) **103.3**քմ և **12.6**քմ մակերեսներով հողամասերը, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող տարածագնահատման **3-րդ** գոտում գտնվող **106.2**քմ և **9.7**քմ մակերեսներով հողամասերի հետ փոխանակելուն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **36** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **26**, դեմ՝ **3**, ձեռնպահ՝ **7**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

16. ԼՍԵՑԻՆ - Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Նալբանդյան փողոցի **h.50** շենքի **h.h.180** և **181** հասցեներում գտնվող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման **15.08.2002**թ. **h.h.504306** և **504310**

վկայականներ) 464.0քմ և 257.0քմ մակերեսներով տարածքները անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2026 թվականի մարտի 30-ը ժամկետով տրամադրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի նախարարության «Վլադիմիր Ենգիբարյանի անվան բոնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

17. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչ Գայանե Եղիազարյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Հ.Հովհաննիսյան փողոցի հ.115 դպրոցին հարող տարածքում գտնվող 60.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողերի կատեգորիայից փոխադրել Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

18. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լիլիթ Կիրակոսյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ադոնցի փողոցի հ.19/19 հասցեում գտնվող «Սլ Մայնիգ» ՄՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.56318հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 34, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

19. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Աննա Զավախյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լիլիթ Կիրակոսյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լիլիթ Կիրակոսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ՝ Գոհար Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, Հասրաթյան փողոցին հարող տարածքում, տարածազնահատման 7-րդ գոտում գտնվող 1190.0քմ մակերեսով հողամասից /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 22.06.2006թ. հ.2110293 վկայական/ 176.35քմ մակերեսով հատվածը, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Հասրաթյան փողոցին հարող տարածքում գտնվող հողամասին կից, տարածազնահատման 7-րդ գոտում գտնվող 176.35քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

20. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականության **2020** թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականության **2020** թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Հաստատել Երևան համայնքի սեփականության **2020** թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **37** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **37**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

21. ԼՍԵՑԻՆ - «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոն Մելքոնյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Հաստատել «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **39** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **32**, դեմ՝ **3**, ձեռնպահ՝ **4**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Հիմք ընդունելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 105-րդ կետի պահանջները՝ որոշվեց Երևանի ավագանու 16.03.2021թ. նիստի տևողությունը ժամը 17.00-ից հետո երկարաձգել:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 17.30-ին:

22. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի փետրվարի 12-ի N59-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար Արմեն Գալջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի փետրվարի 12-ի N59-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սարատ Թոխյանին:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի փետրվարի 12-ի «Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N5-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N59-Ա որոշումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

23. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ ընդունելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ ընդունելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Հռիփսիմե Հունանյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

3. Արմեն Ներսիսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը **18.10**-ին:

4. Սերգեյ Գյոզայան-Երևանի ավագանու անդամ

5. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

6. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

7. Մարկոս Հարությունյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

8. Լիլիթ Կիրակոսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկան Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը և Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **36** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` **5**, դեմ` **28**, ձեռնպահ` **0**

Որոշումը չընդունվեց

24. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Դավիթ Համբարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

1. Սերգեյ Գյոզայան-Երևանի ավագանու անդամ

2. Արմեն Գալջյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի հունիսի **16**-ի **N16**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» **N10**-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման **N 1** հավելվածում`

ա. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի **1**-ին գլխի **17**-րդ կետի «Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն» բառերը փոխարինել «Լրատվության վարչություն» բառերով:

2) Որոշման N 2 հավելվածում`

ա. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն» բաժերը փոխարինել «Լրատվության վարչություն» բաժերով:

2. Սույն որոշումը` Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասով ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` 28, դեմ` 1, ձեռնպահ` 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2021 թվականի ապրիլի 20-ին, ժամը 11.00-ին:

Առաջարկն ընդունվեց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ